

**122. ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) «ՔՐԱՏԱԿԻ ս. ՄԻՆԱՍ» եկեղեցու հյուսիսային պատի տակ, դրսից, կանգնած խաչքարի շրջանակներին.**

ԵՍ ԱՆԱՆԻԱ ՄԻԱՑԿԵՑ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ
ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԹՎ. :ՉԾԳ:

*ՄԻԱՑԿԵՑ-համարում ենք խոսակցական լեզվի ձև։*

**123. ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) գյուղամիջի եկեղեցու կարին, արևմայան կողմից կանգնեցրած խաչքարի տակին.**



ԹՎ. :ՉՀԳ:

*Եկեղեցին ավելի նոր է, նորոգված 1866-ին վերաբնակվողների կողմից։*

## ՀԱԼԻՁՈՐ ԵՎ ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ

*Հաբանդ գավառի հնագույն գյուղերից է, աղբյուրների մեջ հիշատակված է 10-րդ դարի սկզբներից, իսկ Ստ. Օրբելյանի ցուցակի մեջ, իր հարկի չափով միջին մեծության գյուղերի շարքումն է (8)։*

*Դեռևս 10-րդ դարում Սյունյաց Բաբգեն իշխանի դուստր Համասպրուհին Հալիձոր գյուղը նվիրել է Տաթևի վանքին, որը կրկին հաստատել է Տարսայիճ Օրբելյանը 1274 թ.։ Հալիձորը Տաթևի սեփականությունն էր համարվում մինչև 19-րդ դարն էլ։*

*Ստ. Օրբելյանի և հին հիշատակարանների մեջ գյուղի անունը գրվել է ՀԱԼԷ ձևով, հետևում Հալիձոր գրելու դեպքում հասկացվում էր գյուղի շրջապատի ձորը. հետագայում գրվում է Հալի-ձոր և ի վերջո Հալիձոր։*

*Գյուղի միջում այժմ հին հուշարձաններ չկան, միակ եկեղեցին 17-րդ դարի սկզբի շենք է, թեև նրա հարավային մուտքի բարավորի վրա գրված է ԹՎ.:ՈԿ:, բայց ինչպես գրչության ոճը, նույնպես և շենքի ճարտարապետական առանձնահատկությունները այդ չեն հաստատում, պետք է լինի :ՌԿ: Գրիչը Ռ-ի վրա մոռացել է հորիզոնական ստեղը փորագրել։*

*Հալիձորից դուրս, նրա սահմաններում կան հետևյալ կարևոր հուշարձանները.*

1. «Շրջիկ» կոչված վայրում, *գյուղից 3—4 կիլոմետր հյուսիս-արևելք, Որոտան գետի ձախ ափի մոտ, այգիների մեջ, ժայռաբեկորի վրա կանգնած է մի խաչքար, 1265 թ. կալվածագիր-արձանագրությամբ. № 124։*

2. «Խաչիճ խութի» կամ Վճառի ճուշարձաններ, *գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի արևելք, Շնհեր տանող ճամփից աջ, գտնվում է մի ժայռոտ բլուր, որի վրա մնում են մի ավերակ եկեղեցու հիմնապատեր, երեք խաչքարեր, մի քանի գերեզմանաքարեր և տների հիմնապատեր։*

*Այդ վայրը արձանագրության մեջ կոչված է ՎՆՍԱՐ-(=Վանասար=Վանքասար), և 13-րդ դարի վերջին Տարսայիճ Օրբելյանի կողմից նվիրվել է Վարդպետ=ճարտարապետ Սիրանեսին, որպես վարձատրություն նրա կառուցած շենքերի համար, (արձ. № 125)։ Այդտեղ են թաղված նաև Սիրանեսի հայրը և մայրը. արձ. № 126։*

3. Հարանց անապատ. *գտնվում է գյուղից մոտ 5 կիլոմետր հեռու, Որոտան գետի աջ ափին, լեռնալանջի հարթության վրա։ Անապատը բաղկացած է մի եկեղեցուց և գավթից. որոնց շուրջը խցերի և այլ շենքերի ավերակներ կան։ Այս բոլորը շրջապատված են պարսպով։ Վանքից մի քիչ դեպի հյուսիս կա մի մատուռ՝ Պողոս—Պետրոս անվամբ։ Այս բոլոր շինությունները կառուցված են 17-րդ դարում։*

***124. ՀԱԼԻՁՈՐ. «ՇՐՋԻԿ» կոչված վայրում կանգնած խաչքարի ծիկունքին և հյուսիսային կողին. 17 տող.***



Ի ԹՎԻՍ ։ՉԺԴ։ ԵՍ ԳՐԳՈ|ՐԻԿ ԲԱՉՈՒՄ ԱՇԽԱ|ՏՈՒԹԲ ԲԵՐԻ ՋԱՌՈՑՍ ԵՒ ՏՆԿԵՑԻ ՉԲՈՒԽՈՒ|ՈՒԱՑ ԿԷՍՍ ԻԳԻՍ ՎԱ|ՑԵԼՈՒՉՍ, ՑԻՇԽԱՆ|ՈՒԹԾ ԱԾԱՍԷՐ ՊԱՐ|ՈՆԱՑՆ ՍՆՊԱՏԱՑ | ԵՒ ՀԱՐԱՉԱՏԻ ԻՒՐՈՑ ՏԱՐՍԱՑԻՃԻՆ. ԵՍ | ՏԱՐՍԱՑԻՃՍ ԳԻՐ ՏՎԻ ՀԱՑՐԵՆԵՑ ԱՉԳԷ Ա|ՉԳ ։Ց։ ԱՄ ԷՐ ՈՐ ԱՒԵՐ ԷՐ։ ԹԷ ՈՔ Ի | ՀԱՑՈՑ ԿԱՄ | Ի ՏԱՃԿԱՑ ԽԼԵԼ ՋԱՆԱ ։ՑԺԸ։ ՀԱՐ/ԱՊԵՏԱՑՆ ՆՉՈՎԱԾ ԵՂԻՑԻ։

*Խաչքարի գտնված վայրը կոչվում է ՇՐՋԻԿ։*

*Արձանագրության վերջին երկու տողը գրված է հյուսիսային նեղ կողին, վերից վար։*

*Երկրորդ տողում ԱՇԽԱՏՈՒԹԲ բառի առաջին Ա-ից հետո բնական փոս է։*

*Տասնմեկերորդ տողում ՏԱՐՍԱՑԻԾ բառի մեջ երկու տառ բաց է թողել գրիչը. լրացնում ենք։*

*Լալայան, Ազգ. հանդ. Դ. 41. (խիստ աղճատված)*
*Լուսանկ. տախտ.* XI, 39, 40, 41 *(3 կտորից)*

***125. ՀԱԼԻՁՈՐ. «ԽԱՉԻՆ ԽՈՒԹ» վայրում կանգնած խաչքարի պատվանդանի արևմայան երեսին ամբողջովին և հյուսիսային քիվին. 18 տ.***



ԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ՏԱՐՍԱՅԻՃՍ, ՈՐԴԻ ԼԻՊԱՌՏԻ | , ՁՀԱԼԻՁՈՐՈՑ ։Բ։ ԿՈՊԱՐՍ, ՎՆՍԱՐՍ, ՎՆՍԱՐԱՑ ՄԱՐՄԱՆԴՈՎՆ ՍԻՐԱՆԷՍ ՔԱՐԳՈՐԾԻՆ Հ|ԵՐԵՆԻՔ ՏՎԻ ՈՐԳԻՔ ԹՌՌՆ ԵՒ Թ|ՌՌՆ. ՍԻՐԱՆԷՍ ՔԱՐԳՈՐԾՆ ԵԿԵՂ|ԵՑԻ ՇԻՆԵՑ ԱՆՎԱՐՉ ՆՈՐԱՑՎ|ԱՆՍ, ԵՍ ՉԱՑՆ ՆՐԱ ԴԱՏՄԱ|Ն ՓՈԽԱՐԷՆՔ ԱՐԱՐԻ, ՈՐ ՆՐԱՑ| ՀԱՑՐԵՆԻՔ ԼԻՆԻ ՑԱՉԳԷ ՑԱՉԳ. Ո|Վ ՉԱՑՍ ԳԻՐՍ ԽԱՓԱՆԵԼՈՑ ՋԱՆԱ ՑԻՄՈՑ ԿԱՄ ԱՒՏԱՐԱՑ, ։ՑԺԸ։ ՀԱ|ՑՐԱՊԵՏԱՑՆ ՆՉԱՎԱԾ ԵՂԻՑԻ, ՄԱՍՆՈՑ ԲԱԺԻՆ ՑՈԴԱՑԻ | ԱՌՑԷ. ՀԱՍՏԱՏԱՑ ԳԻՐՍ | .
ԵՍ ՏՐ ՀԱՑՐ ՎԿԱՑ ԵՄ,
ԵՍ | ՏՐ ՍԱՐԳԻՍ ՎԿԱՑ ԵՄ[Փ].

*Երկրորդ տողում ԼԻՊԱՌՏի բառի Ռ տառի հորիզոնական սաեղը մոռացված է գրչի կողմից։*

*Երրորդ տողում ԿՈՊԱՐ բառից առաջ Ր ուղղում ենք Բ հորիզոնական ստեղը մոռացված է գրչի կողմից։*

*Չորրորդ տողի ՎՆՍԱՐ համարում ենք ՎԱՆԱՍԱՐ—ՎԱՆՔԱՍԱՐ բառի բարբառային ձև. նույնտեղ ՎՆՍՑ համարում ենք նույն ՎՆՍԱՐ բառի հոլովական ձև՝ ՎՆՍԱՐԱՑ, տառերը մոռացված են, լրացնում ենք.*

*Վեց և յոթերորդ տողերում ՈՐԴԻՔ ԹՈՌՆ ԵՒ ԹՈՆՌ կարդում ենք ՈՐԴԻՔ ԹՈՌՆ և ԹՈՌՆ, վերջին բառի մեջ տառերը հետ ու առաջ են դրված սխալմամբ, գրչի կողմից։*

*Տասներորդ տողում ՀԱՅՐԱՊԱՅՆ բառի մեջ, նույնպես սխալմամբ, տառեր են բաց թողնված. լրացնում ենք ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ։*

*Մյուս անկանոնությունները համարում ենք բարբառային ձևեր։*

*Լալայան, Գ. 41 և «ԶԱՆԳԵԶՈՒՐ» 40. երկու դեպքում էլ խիստ աղճատված.*
*Լուսանկ. տախտ.* XII. 42

**126. ՀԱԼԻՁՈՐ.** *«ԽԱՉԻՆ ԽՈՒԹ» կոչված վայրում նախորդի հարավում կանգնած խաչքարի ճակատին. 4 տ.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ ԵՍ ՀՁԱՐՄԷԼ | ՈՒ ՍԻՐԱՆԷՍ ԿԱՆԿՆԵՑԻՆՔ | ԶԽԱՉՍ ՀՕՐՆ ՄԵՐՈ ԳՈՔ|Ա ՄՕՐՆ ՄԵՐՈ ԹԷՆԻԿԱ։

*Լուսանկ. տախտ.* XII, 43

**127. ՀԱԼԻՁՈՐ.** *նույնտեղ. ավերակ եկեղեցու առաջ կանգնած խաչքարի վրա. 3 տ.*

ԶԽՈՐՄԷՐ ՅԻՇ|ԵՑԷՔ Ի ՔՍ. ԹՎ | ։ՊԿԳ։

*Լուսանկ. տախտ.* XIII, 45.

**128. ՀԱԼԻՁՈՐ.** *նույն տեղ մի տափակ գերեզմանաքարի երեսին. 2 տ.*



ՄՈՒՐԱՏՇԱ . . . .
ԱՍՊԱՀԱՆՇԱ . . . .

**129. ՀԱԼԻՁՈՐ.** *գյուղամիջի ս. ՄԻՆԱՍ եկեղեցու հարավային մուտքի բարավորին.*



ԹՎ ։ ՌԿ։

*Թվականի Ո-ն ուղղում ենք Ռ. նկատի ունենալով գրչության ոճը և շենքի ճարտարապետության բնույթը։*



**130. ՀԱԼԻՁՈՐ.** *գյուղամիջի ս. ՄԻՆԱՍ եկեղեցու հարավային պատի մեջ ագուցված խաչքարի տակին. 3 տ.*

ԱԾ ՈՂՈՐ|ՄԻ ՍԱՐԳ|ՍԻ . . . . .

**131. ՀԱԼԻՋՈՐ. ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ.** *պարսպի դարպասից վեր ագուցված կիսաշրջան քարի վրա. 9 տ.*



ԵՒ ՅԱՅՐԱՊԵՏ ¦ ՃԵՏՆ ԱՆԾԱՏՐՈՑ,
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԸՍՏԱ ԹԵԻ ԿԻՐԱ-
ԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ, ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀՕՐ
ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՍԲ ¦ ՀՈԳՒՈՅՆ, ԵՍ ՄԵ-
ՂԱՊԱՐՏ, ՍԱՀԱԿ ԱԲԵՂԱՅՍ, ՈՐ
ԵՄ ԵՐԿՐԵ ՍԻՒՆԵՑԻ ՊԱՐԻՍՊՍ ՇԻ-
ՆԵՑԻ, ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ՄԻԱԲԱ-
ՆԻՑՍ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻ ՏՈՂԱՑ.

*Լրացումների պայմանական նշանները չենք դնում, բնագիրը չխճողելու համար։*

*Լուսանկ. տախտ.* XIII, 44

**132. ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ.** *պարսպի վերին շրթունքին մի փոքր քարի վրա. 2 տող.*



ՅԻՇԱՏԱԿ Է ԴՈՒԼԷՏԻՆ.

**133. ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ.** *պարսպի դարպասի կամարակապ քարի վրա.*

ՅԻՇԱՏԱԿԵ ԴՈՒՌՍ ԱՂԱՂՆԵԱՑՆ ԱՅ ԱՆԹԱՌԱՆԻՆ, ՀՌԻՓՍԻՄԻՆ,
ՄԱՐԵԱՆՈՍԻՆ, ՅԵՒՈՒՆ ԵՒ ԱԼԷՔՍԻԱՆՈՍԻՆ. ԹՎ. ։ՌՃԿԶ։ ԷՐ
ԵՒՍ ԱՌԱՒԵԼ, ՅԱԿՈԲԻՆ, ԱԲՐԱՀԱՄԻՆ;

*Լալայան, Գ. 147*

**134. ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ.** *եկեղեցու արևմայան մուտքի կամարակալ քարի վրա. արտաքուստ.*

ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԶՄԵՂԱՊԱՐՏ ՍԱՀԱԿ ԱԲԵՂԱՅՍ, ՈՐ ՆՈՐՈԳԵԱՑ ԶԵԿԵՂԵՑԻՍ
ԵՒ ՇԻՆԵԱՑ ԶԳԱՒԻԹՍ, ԶՊԱՐԻՍՊՍ ԵՒ ԱՅԼ ՇԻՆՈՒԱԾՔ ՍՈՒՐԲ ԱՆԱՊԱՏԻՍ,
ՅԻՇԱՏԱԿ ԻՒՐ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ ՏԷՐ ՈՎԱՆԷՍԻՆ ԵՒ ՓԱՐԻԽԱԹՈՒՆԻՆ։

*Լալայան, Գ. 147*

**135. ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ.** *Եկեղեցու արևմայան մուտքի կողքին, դրսից ագուցված մի փոքր խաչքարի վրա.*

ՅԻՇԱՏԱԿ Է ԶԱՑՍ ԽԱՉՍ ԾԱՏՈՒՐ ՊԱՊԻՆ.

*Լալայան, Գ. 147*

**136. ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ.** *եկեղեցու արևմայան մուտքի կողքին, դրսից ագուցված մի փոքր խաչքարի վրա.*

ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉՍ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ.

*Լալայան, Գ. 147*